«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

"YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY
AFTER MKHITAR HERATSI" FOUNDATION

ՀՀ, 0025, Երևան, Կորյունի փ. 2 ▪ Koryun St. 2, Yerevan, 0025, Republic of Armenia ▪ Tel: +374 10 582532 ▪ URL: www.ysmu.am ▪ E-mail: genserv@ysmu.am

թիվ 09/985

«15» 07 2024 թ.

«ԲԻ ԹՈՒ ԲԻ ՔՈՆԵՔՇՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ ԿԱՐԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ներսիսյան,

Համաձայն 2024 թվականի մայիսի 29-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և «ԲԻ ԹՈՒ ԲԻ ՔՈՆԵՔՇՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքված շինանյութերի մատակարարման թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2024/7-4-ԵՊԲՀ-9» պայմանագրի՝ «ԲԻ ԹՈՒ ԲԻ ՔՈՆԵՔՇՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավորվել է 30 օրացուցային օրվա ընթացքում մատակարարել պայմանագրի թիվ 33 չափաբաժնով նախատեսված ապրանքը՝ «Բարձրորակ էմալ, ակրիլային ներկ ջրով բացվող» (որը մինչև այսօր չի մատակարարվել), սակայն «ԲԻ ԹՈՒ ԲԻ ՔՈՆԵՔՇՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը 2024 թվականի հուլիսի 11-ի թիվ 7350 գրությամբ խնդրել է մասնակի լուծել թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2024/7-4-ԵՊԲՀ-9» պայմանագիրը թիվ 33 չափաբաժնի մասով:

Հիմք ընդունելով 2024 թվականի հուլիսի 11-ին «ԲԻ ԹՈՒ ԲԻ ՔՈՆԵՔՇՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված թիվ 7350 գրությունը՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը միակողմանի մասնակի լուծում է 29.05.2024թ. կնքված թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2024/7-4-ԵՊԲՀ-9» ծածկագրով պայմանագիրը թիվ 33 չափաբաժնի մասով:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատած «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ պայմանագիրը կհամարվի լուծված սույն ծանուցումը տեղեկագրում հրապարակելու օրը:

Հարգանքով՝

ՌԵԿՏՈՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ Է. Ռ. ԱՎԵՏԻՍՅԱՆ